

ՆԱԽԴԻՐ/ԿԱՊ ԿԱՄ ՄԱԿԲԱՅ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԱԿԱՆ  
ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ՀՏԴ 81

DOI: 10.56246/18294480-2023.15-33

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՆԱ

Գավառի պեղական համալսարանի դասախոս  
Էլփոստ՝ [s.simonyan1990@gmail.com](mailto:s.simonyan1990@gmail.com)

**Հայերենի և անգլերենի՝ որպես օտար լեզվի յուրացման ընթացքում սովորողների համար դժվարություններ են ստեղծում նախդիր, կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող բայական հարադրությունները: Այս դժվարությունների հիմքում հաճախ ընկած է բայական հարադրությունների բազմիմաստությունը: Նույն միավորը կարող է գործածվել տարբեր համարեքստերում տարբեր իմաստներով: Բայական հարադրությունները կարող են գործածվել թե՛ բառային և թե՛ դարձվածային իմաստով: Բայական հարադրություններից շատերն էլ բառերի ազատ կապակցություններ են, որոնք ձեռք են բերել դարձվածային իմաստ:**

**Հայերենի բայական հարադրություններում ոչ բայական բաղադրիչը նախորդում է բայական բաղադրիչին: Անգլերենում ոչ բայական բաղադրիչը դրվում է բայական բաղադրիչից հետո: Սակայն նախադասության մեջ գործածվելիս ոչ բայական բաղադրիչը կարող է փոխել դիրքը, որը թույլ չի տալիս սովորողներին դրանք նկատել և ընկալել որպես մեկ միավոր՝ առաջացնելով մի շարք դժվարություններ:**

**Համեմատվող լեզուներում բայական հարադրությունների հետ կապված բարդությունների հիմքում է ընկած նաև դրանց մեծ քանակը: Մեկ բայը, հարադրվելով տարբեր մակբայների և նախդիրների, կապերի հետ, կարող է կազմել բազմաթիվ բայական հարադրություններ, որոնք իրարից լիովին տարբերվում են իմաստով և գործածության ոլորտով:**

**Սույն հոդվածում զուգահեռական քննությամբ ներկայացրել ենք այն գործոնները, որոնք ընկած են հայերենի և անգլերենի նախդիր, կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող բայական հարադրությունների յուրացման դժվարությունների հիմքում:**

**Բանալի բառեր՝** բայական հարադրություն, դարձվածային բայ, զուգահեռական քննություն, բայական բաղադրիչ, ոչ բայական բաղադրիչ, անգլերեն, հայերեն, իմաստ, դարձվածային, մակբայ, նախդիր, կապ:

### Ներածություն

Անգլերենը և հայերենը որպես օտար լեզու սովորողների համար նախդիր, կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող բայական հարադրությունները մեծ դժվարություններ են ստեղծում: Հեշտ չէ դրանք սովորելը և մտապահելը: Պատճառներից մեկը դրանց մեծաքանակ լինելն է: Ու Քրանը, Ռ. ՄաքՔրամը և Ռ. ՄաքՆիլը «Անգլերենի պատմությունը» գրքում քննում են, թե ինչպես են անգլերենի վրա ազդել տարբեր լեզուները՝ լատիներենը, գերմանական և կելտական լեզուները,

որը նպաստել է անգլերենի բառապաշարի հարստացմանը<sup>1</sup>: Լոնգմանի դարձվածային բայերի բառարանում<sup>2</sup> գրանցված են 5000 դարձվածային բայեր: Օքսֆորդի<sup>3</sup> և Քեմբրիջի<sup>4</sup> դարձվածային բայերի բառարաններում ներկայացված են 6000 միավորներ:

Հայերենում այս միավորները համեմատաբար փոքրաթիվ են: Այլ Մարգարյանը նշում է, որ հայերենում այս կազմությունների թիվը հասնում է շուրջ 1000-ի<sup>5</sup>:

Բայական հարադրությունների ընկալման և յուրացման հետ կապված դժվարություն է ստեղծում նաև այն, որ հաճախ նույն բայական հարադրությունը կարող է լինել բազմիմաստ և ունենալ թե՛ բառային, թե՛ դարձվածային իմաստ:

Նախադասության մեջ բայական հարադրության ոչ բայական բաղադրիչը կարող է փոխել իր դիրքը, որն ավելի է բարդացնում նախադասության մեջ դրանց ընկալումը որպես բայական հարադրություն:

### Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացնելիս կիրառել ենք համեմատության, նկարագրության և վերլուծության մեթոդները: Նշված մեթոդների կիրառմամբ բացահայտել ենք, թե ինչն է ընկած այն դժվարությունների հիմքում, որոնց հանդիպում են սովորողները հայերենի և անգլերենի բայական հարադրությունները ուսանելիս:

Սովորողների առջև ծառայած խնդիրները լուսաբանելու համար բերված բայական հարադրությունները և դրանց իմաստները վերցված են հետևյալ բառարաններից. Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»<sup>6</sup>, Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»<sup>7</sup>, Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»<sup>8</sup>, Ա. Վ. Կունինի «Անգլերեն-ռուսերեն դարձվածաբանական բառարան»<sup>9</sup>, «Օքսֆորդի իդիոմների բառարան»<sup>10</sup>, «Ամերիկյան իդիոմների բառարան»<sup>11</sup>, «Օքսֆորդի դարձվածային բայերի բառարան»<sup>12</sup>:

\*\*\*

Բայական հարադրությունների յուրացման հետ կապված դժվարություն է ստեղծում այն, որ նույն բայական հարադրությունը կարող է գործածվել տարբեր համատեքստերում՝ արտահայտելով միանգամայն տարբեր իմաստներ: Օրինակ՝ turn up դարձվածային բայը կարող է գործածվել տարբեր իմաստներ արտահայտելու համար: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

1. հանկարծ հայտնվել, գալ, օր՝

He **turned up** at my house.

<sup>1</sup> McCrum R., Cran W., and MacNeil R., The Story of English, Penguin Books, New York, N. Y., U. S. A., 1993., pp. 33-108.

<sup>2</sup> Longman Dictionary of Phrasal Verbs, Rosemary Courtney, Addison-Wesley, 1983:

<sup>3</sup> The Oxford Phrasal Verbs Dictionary, Colin McIntosh and Ben Francis, Oxford University Press, 2001:

<sup>4</sup> Cambridge Phrasal Verbs Dictionary, Cambridge University Press, 2nd Edition, 2006:

<sup>5</sup> Մարգարյան Այլ., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 135:

<sup>6</sup> Աղայան Է. Բ., «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976:

<sup>7</sup> Բեդիրյան Պ. Ա., «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան», Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2011:

<sup>8</sup> Սուքիասյան Ա. Մ. և Գալստյան Ս. Ա., «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան», Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1975:

<sup>9</sup> Кунин А. В. , Англо-русский фразеологический словарь, изд. М., “Русский язык”, 1984.

<sup>10</sup> Oxford Dictionary of Idioms, Second Edition, Oxford University Press, New York, 2004.

<sup>11</sup> Spears, R.A., Dictionary of American Idioms and Phrasal Verbs, The McGraw-Hill Companies, USA, 2005.

<sup>12</sup> Oxford Phrasal Verb Dictionary, Oxford University Press, 2002.

«Նա **հանկարծ եկավ** իմ տուն»:

2. բարձրացնել, ուժեղացնել մի բան, օր.՝

Please, **turn up** the radio.

«Խնդրում եմ, ուղիղի **ձայնը բարձրացրո՛ւ**»:

3. գնալ, այցելել, օր.՝

Did you **turn up** for the concert last night?

«Անցյալ գիշեր համերգին **գնացի՞ր**»:

4. գտնել կամ հայտնաբերել մի բան, օր.՝

We **turned up** some old photos while cleaning out the attic.

«Ձեզնահարկը մաքրելիս մի քանի հին լուսանկարներ **գտանք**»:

5. ինչ-որ բան ծալել կամ փաթաթել, օր.՝

She **turned up** the sleeves of her shirt.

«Նա **ծալեց** վերնաշապիկի թևերը»:

6. պատահել, տեղի ունենալ, օր.՝

I'm hoping something good **turns up** soon.

«Հուսով եմ, որ շուտով մի լավ բան **կլինի**»:

7. բարելավվել, ավելի լավ դառնալ, օր.՝

The weather is finally **turning up**.

«Եղանակը վերջապես **սկսում է լավանալ**»:

Նույն կերպ նաև հայերենի *հեպ գցել* բայը կարող է արտահայտել մի քանի իմաստ, ինչպես՝

1. մեկին ետ թողնել, առաջ անցնելուն խանգարել, օր.՝

*Մարզիկը հաղթահարեց բոլոր արգելքները և **հեպ գցեց** բոլոր մրցակիցներին:*

2. խոչընդոտել զարգացումը, առաջխաղացումը խանգարել, օր.՝

*Վարչական թիմի ոչ պրոֆեսիոնալ լինելը մեզ շատ է **հեպ գցում**:*

3. ուշացնել, օր.՝

*Քո ուշացումը մեկ ժամով **հեպ կգցի** մեր օրակարգը:*

4. հետաձգել, օր.՝

*Նա անընդհատ **հեպ է գցում** օրվա անելիքը:*

5. խնայել, հավաքել, տնտեսել, օր.՝

*Նա պարտք խնդրել չի սիրում, դրա համար էլ միշտ գումար է **հեպ գցում**:*

Երկու լեզուներում էլ կան հարադրություններ, որոնք առաջացել են ազատ բառակապակցություններից: Օր.՝ *մեջը մտցնել*, *առաջ գնալ*, *ցած գցել*, *աչքերը փակել*, *put on* «դնել մի բանի վրա», *draw a picture* «նկար նկարել», *feed the fishes* «ձկներին կերակրել», *go down* «ցած իջնել» ազատ բառակապակցությունները գործածվում են նաև որպես դարձվածային իմաստ ունեցող բայական հարադրություններ, ինչպես՝ *մեջը մտցնել* «դրդել մի բան անելու, նպատակադրել», *առաջ գնալ* «զարգանալ, առաջադիմել», *ցած գցել* «ունեցած պաշտոնից, դիրքից զրկել», *put on* «հագնել», *draw a picture* «մի բանի մասին պատկերացում կազմել», *feed the fishes* «խեղդվել», *go down* «խորտակվել»: Այս դեպքում առկա են բայական դարձվածքներ, որոնց իմաստն այլևս բաղադրիչների բառային իմաստների պարզ գումարը չէ:

Սովորողների համար դժվարություն է ստեղծում նաև այն, որ բայական հարադրությունների ոչ բայական բաղադրիչը կարող է փոխել իր դիրքը նախադասության մեջ: Հայերենում ոչ բայական բաղադրիչը դրվում է բայական բաղադրիչից առաջ, ինչպես՝ *գործ բռնել*, *կյանք մտնել*, իսկ անգլերենում՝ բայական բաղադրիչից հետո, ինչպես՝ *fear for* «անհանգստանալ», *fence in* «բռնանալ մեկի ազատությանը»: Սակայն հաճախ ոչ բայական բաղադրիչը կարող է անջատվել բայից և փոխել իր դիրքը. սովորողների համար անջատվող ոչ բայական բաղադրիչը դժվարություններ է ստեղծում: Անգլերենում որոշ կազմություններում ոչ

բայական բաղադրիչը միշտ դրվում է բայից հետո, ինչպես՝ run into «պատահաբար հանդիպել» դարձվածային բայի դեպքում: Օրինակ՝

I often **run into** her at the university.

«Համալսարանում հաճախ եմ պատահաբար հանդիպում նրան»:

Սխալ են՝

I often **run** her **into** at the university.

I often **run** her at the university **into**.

Հաճախ էլ ոչ բայական հարադիրը կարող է դրվել և՛ բայից հետո, և՛ անջատվել բայից ու փոխել իր դիրքը: Այս երևույթը կարող է հանդիպել այն դեպքում, երբ նախադասության կազմում որպես ստորոգյալ հանդես եկող դարձվածային բայը ունի խնդիր: Խնդիրը կարելի է դնել թե՛ բայի և ոչ բայական հարադրի միջև, թե՛ ոչ բայական հարադրից հետո: Օրինակ՝ write down «գրի առնել» դարձվածային բայի հարադիրը կարող է անջատվել բայից և փոխել դիրքը: Ինչպես՝

1. The assistant **writes down** everything he says.

2. The assistant **writes** everything he says **down**.

«Օգնականը **գրի է առնում** այն ամենը, ինչ նա ասում է»:

Հայերենում էլ ոչ բայական հարադիրը կարող է փոխել իր դիրքը: Սակայն եթե կայուն շարադասություն ունեցող անգլերենում սա արտասովոր երևույթ է և արժանացել է համակողմանի ուշադրության, ապա հայերենում, որն ունի ազատ շարադասություն, անջատվող բաղադրիչը այդքան էլ մեծ ուշադրության չի արժանացել:

Հայերենի որոշ հարադրավոր բայերում ոչ բայական բաղադրիչը միշտ նախորդում է բային: Օրինակ՝ *դեմ առնել* «արգելքի հանդիպել» հարադրավոր բայի դեպքում *դեմ* հարադիրը միշտ դրվում է բայից առաջ, ինչպես՝

*Բահր **դեմ առավ** մի մեծ քարի:*

Սխալ են՝

*Բահր **առավ** **դեմ** մի մեծ քարի:*

*Բահր **առավ** մի մեծ քարի **դեմ**:*

*Դուրս տալ* «անմտածել, անմիտ խոսել» հարադրավոր բայի *դուրս* բաղադրիչը նույնպես միշտ դրվում է բայից առաջ, ինչպես՝

*Նա սիրում է առանց մտածելու **դուրս տալ**:*

Սխալ է՝

*Նա սիրում է առանց մտածելու **տալ** **դուրս**:*

Հայերենի շատ հարադրավոր բայերում ոչ բայական բաղադրիչը կարող է դրվել թե՛ բայից հետո և թե՛ առաջ: Օրինակ՝ *առաջ գնալ* հարադրավոր բայը գործածվում է նաև *գնալ առաջ* ձևով, ինչպես՝

Նա իր գործում շատ է **առաջ գնացել**:

Նա իր գործում շատ է **գնացել** **առաջ**:

Նույն կերպ նաև *ներս անել* հարադրավոր բայը կարող է գործածվել *անել ներս* ձևով, ինչպես՝

*Ոչխարների հոտը **ներս արեց**:*

*Ոչխարների հոտը **արեց** **ներս**:*

Կամ՝

*Մայրն ամեն կերպ փորձեց որդուն **հեղ պահել** խնդիրներից:*

*Մայրն ամեն կերպ փորձեց որդուն **պահել** **հեղ** խնդիրներից:*

Բայական հարադրությունների յուրացման հետ կապված մյուս բարդությունը դրանց քանակի մեջ է:

Համաձայն Օքսֆորդի դարձվածային բայերի բառարանի՝ որպես դարձվածային բայերի բայական բաղադրիչ առավել հաճախ գործածվում են 36 բայ. դրանք են՝ break «կտրել», bring «բերել», call «կանչել, զանգել», come «գալ», cut «կտրել», do «անել», fall «ընկնել», get «ստանալ», give «տալ», go «գնալ», hang «կախել», hold «պահել», keep «պահել», kick «խփել», knock «թակել», lie «ստել», live «ապրել», look «նայել», make «պատրաստել», move «շարժել», pass «անցնել», play «խաղալ», pull «քաշել», push «հրել, սեղմել», put «դնել», run «վազել», send «ուղարկել», set «դնել», sit «նստել», stand «կանգնել», stay «մնալ», stick «ծակել, դնել», take «վերցնել», talk «խոսել», throw «նետել», turn «շրջվել»<sup>13</sup>:

Ալ. Մարգարյանն էլ նշում է, որ տեղի և տարածական իմաստ ունեցող հարադիրների հետ մեծ թվով հարադրավոր բայեր են կազմում հետևյալ բայերը՝ *անել, առնել, բերել, գալ, գնալ, գցել, դառնալ, դնել, ելնել, ընթանալ, ընկնել, թափել, թողնել, թռչել, լողալ, լցնել, կանգնել, կանչել, հանել, հոսել, հրել, ձգել, մնալ, նայել, նետել, նստել, շրջել, պարզել, սահել, սողալ, վազել, վանել, վարել, փալ, փանել, փոխել, փչել, քայլել, քաշել, քշել*<sup>14</sup>:

Մեկ բայը, հարադրվելով տարբեր մակբայների և նախդիրների/կապերի հետ, կարող է կազմել շատ բայական հարադրություններ՝ արտահայտելով զանազան իմաստներ:

Դիտարկենք go «գնալ» բայով կազմված առավել գործածական դարձվածային բայերը՝

1. go after «հետապնդել, հետևել մեկին կամ ինչ-որ բանի», օր.՝

He **went after** his dream of becoming a musician.

«Նա գնաց երաժիշտ դառնալու իր երազանքի հետևից»:

2. go against «դեմ գնալ, հակառակվել», օր.՝

It **goes against** my principles to cheat.

«Խաբելը հակասում է իմ սկզբունքներին»:

3. go ahead «շարունակել», օր.՝

**Go ahead** and tell everyone our secrets!

«Դե՛, շարունակի՛ր և պատմի՛ր բոլորին մեր գաղտնիքները»:

4. go along «ուղեկցել, համաձայնել», օր.՝

I decided to **go along** with their plan.

«Ես որոշեցի համաձայնել նրանց ծրագրին»:

5. go away «հեռանալ, անհետանալ», օր.՝

I need some peace, please **go away**.

«Ինձ հանգիստ է պետք, խնդրում եմ, հեռացիր»:

6. go back «վերադառնալ», օր.՝

Let's **go back** to the beginning and start again.

«Վերադառնանք սկզբին և նորից սկսենք»:

7. go for «ընտրել», օր.՝

I'll **go for** the chocolate cake.

«Ես շոկոլադե տորթը կընտրեմ»:

8. go in for «մասնակցել», օր.՝

She decided to **go in for** the dance competition.

«Նա որոշեց մասնակցել պարի մրցույթին»:

9. go off «պայթել», օր.՝

The bomb **went off** and caused a lot of damage.

«Բումբը պայթեց է և մեծ վնաս պատճառեց»:

<sup>13</sup>. Oxford phrasal verbs dictionary, Oxford university press, 2001, էջ vii:

<sup>14</sup>. Մարգարյան Ալ., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 144:

10. go on «շարունակել», օր.՝

Please **go on** with your story.

«Խնդրում եմ, շարունակի՛ր քո պատմությունը»:

11. go out «գնալ, դուրս գնալ», օր.՝

We're **going out** for dinner this evening.

«Այսօր երեկոյան գնում ենք ընթրելու»:

12. go over «վերանայել, ուշադիր զննել, նայել», օր.՝

Let's **go over** the details of the plan one more time.

«Եկեք ևս մեկ անգամ անդրադառնանք ծրագրի մանրամասներին»:

13. go through «միջով անցնել, դիմանալ», օր.՝

He **went through** a lot of pain after the accident.

«Վթարից հետո նա շատ ցավեր է ունեցել»:

14. go with «իրար համապատասխանել, սազել», օր.՝

Those shoes **go well with** your outfit.

«Այդ կոշիկները սազում են հագուստիդ հետ»:

15. go up «ավելանալ, բարձրանալ», օր.՝

The price of oil **is going up** every year.

«Նավթի արժեքը տարեցտարի բարձրանում է»:

Հայերենի *գնալ* բայն էլ, հարադրվելով մի շարք կապերի և մակբայների հետ, կազմում է բազմաթիվ հարադրություններ՝ արտահայտելով տարբեր իմաստներ, ինչպես՝

1. *առաջ գնալ* «հաջողություն ունենալ», օր.՝

*Առանց խելամիտ քայլերի և հստակ ռազմավարության առաջ գնալ հնարավոր չի լինի:*

2. *դեմ գնալ* «հակառակվել, հակառակն անել», օր.՝

*Միթե հնարավոր է դեմ գնալ սեփական ճակատագրին:*

3. *հետ գնալ* «վերադառնալ», օր.՝

*Երբ հետ եկանք, պարզվեց, որ տանը հյուրեր ունենք:*

4. *հեռու գնալ* «հաջողության հասնել», օր.՝

*Իր համառ բնավորության և աշխատասիրության շնորհիվ նա հեռու կգնա:*

5. *վրա գնալ* «հարձակվել, հարձակում գործել», օր.՝

*Բռունցքները թափահարելով տղան վրա գնաց, որ հարվածի խաբեբային:*

Go և *գնալ* բայերով կազմված վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, թե ինչքան շատ բայական հարադրություններ կարող են կազմվել մեկ բայի և տարբեր նախդիրների/կապերի, մակբայների հարադրությամբ՝ արտահայտելով տարբեր իմաստներ:

## Եզրակացություն

Այսպիսով, մակբայ կամ նախդիր, կապ բաղադրիչ ունեցող բայական հարադրությունները մի շարք դժվարություններ են ստեղծում սովորողների համար թե՛ հայերենում, թե՛ անգլերենում: Այս դժվարությունների հիմքում ընկած են հետևյալ հիմնական պատճառները՝

**բազմիմաստություն և դարձվածային իմաստ.** բայական հարադրությունները հաճախ բազմիմաստ են և կարող են գործածվել տարբեր համատեքստերում: Հաճախ դրանք, բառային իմաստից բացի, ունեն նաև դարձվածային իմաստ:

**Շարադասություն.** հայերենում ոչ բայական բաղադրիչը դրվում է բայական բաղադրիչից առաջ, իսկ անգլերենում՝ բայական բաղադրիչից հետո: Սակայն ոչ բայական բաղադրիչը կարող է նաև անջատվել բայից և փոխել դիրքը:

**Քանակ.** բայական հարադրությունները մեծաքանակ են (հատկապես անգլերենում): Մեկ բայը, հարադրվելով տարբեր մակբայների և նախդիրների/կապերի հետ, կարող է կազմել բազմաթիվ բայական հարադրություններ:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976:
2. Բեդիրյան Պ. Ս., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2011:
3. Մարգարյան Ա. Ս., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:
4. Սուքիասյան Ա. Մ. և Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1975:
5. Кунин А. В., Англо-русский фразеологический словарь, изд. “Русский язык”, 1984.
6. Cambridge Phrasal Verbs Dictionary, Cambridge University Press, 2nd Edition, 2006:
7. Longman Dictionary of Phrasal Verbs, Rosemary Courtney, Addison-Wesley, 1983:
8. McCrum R., Cran W., and MacNeil R., The Story of English, Penguin Books, New York, N. Y., U.S.A., 1993.
9. Oxford Dictionary of Idioms, Second Edition, Oxford University Press, New York, 2004.
10. Oxford Phrasal Verb Dictionary, Oxford University Press, 2002.
11. Spears R.A., Dictionary of American Idioms and Phrasal Verbs, The McGraw-Hill Companies, USA, 2005.

### **LEARNING VERB-PARTICLE CONSTRUCTIONS FEATURING PREPOSITIONAL/POSTPOSITIONAL OR ADVERBIAL COMPONENTS**

**SIMONYAN SONA**

*Lecturer of Gavar State University*

e-mail: [s.simonyan1990@gmail.com](mailto:s.simonyan1990@gmail.com)

In this article, we outline the main factors that make the learning process of verb-particle constructions challenging in Armenian and English.

Verb-particle constructions with a preposition/postposition or adverbial component pose challenges for learners of Armenian and English as foreign languages. These difficulties arise from the polysemy of these structures, where the same construction can have different meanings in various contexts. Many verb-particle constructions can be used both literally and idiomatically.

In Armenian, the non-verbal component precedes the verbal component in these constructions, while in English, it follows the verbal component. However, the position of the non-verbal component can change, making it challenging for learners to recognize and understand them as cohesive units.

Learning verb-particle constructions is complex because of their abundance. A single verb can form multiple constructions by combining with different adverbs and prepositions/postpositions, which differ in semantics and usage.

Thus, the factors contributing to these challenges include:

- Polysemy and idiomatic meaning: Verb-particle constructions exhibit polysemy and can have idiomatic interpretations.

- Word order: In Armenian, the non-verbal component precedes the verbal component, while in English, it follows. However, the non-verbal component can also be separated and change position in both languages.

- Quantity: Verb-particle constructions are abundant with multiple combinations of adverbs and prepositions/postpositions.

**Keywords:** *verb-particle construction, phrasal verb, comparative analysis, verbal component, non-verbal component, English, Armenian, meaning, phraseological, adverb, preposition, postposition.*

## ИЗУЧЕНИЕ КОНСТРУКЦИЙ С ГЛАГОЛОМ И ЧАСТИЦЕЙ, СОДЕРЖАЩИХ ПРЕДЛОГОВЫЕ/ПОСТПОЗИЦИОННЫЕ ИЛИ НАРЕЧНЫЕ КОМПОНЕНТЫ

СИМОНЯН СОНА

*Преподаватель кафедры иностранного языка и литературы ГГУ*

электронная почта: [s.simonyan1990@gmail.com](mailto:s.simonyan1990@gmail.com)

В данной статье на основе сравнительного анализа представлены факторы, которые отражают трудности изучения глагольных конструкций с частицами в армянском и английском языках.

Глаголы с частицами, содержащие предлог/постпозицию или наречие, представляют трудности для изучающих армянский и английский как иностранные языки. Эти трудности возникают из-за многозначности данных конструкций. Одна и та же конструкция может иметь различные значения в разных контекстах. Многие глаголы с частицами могут использоваться как в буквальном, так и в фразеологическом смысле. Большинство глагольных конструкций с частицами представляют собой сочетания слов, приобретшие определенное фразеологическое значение.

В армянском языке неглагольный компонент предшествует глагольному компоненту. В английском языке, однако, неглагольный компонент следует за глагольным компонентом. Однако в процессе составления предложений неглагольный компонент может изменять свою позицию, что затрудняет его распознавание и понимание изучающими в качестве единого целого, представляя ряд трудностей.

Сложность изучения глагольных конструкций с частицами также связана с их большим количеством. Один глагол может образовывать множество конструкций, сочетаясь с различными наречиями и предлогами/постпозициями, которые существенно отличаются друг от друга по семантике и сфере деятельности.

Таким образом, эти конструкции представляют ряд трудностей для изучающих. Основные факторы, которые вызывают эти трудности, следующие:

- Многозначность и фразеологическое значение: Конструкции глагола с частицей имеют разные значения и используются в разных контекстах, включая фразеологические значения.
- Порядок слов: Не глагольный компонент может отделяться от глагола и менять свою позицию.
- Количество: Конструкции глагола с частицей обильно распространены, особенно в английском языке. Один глагол может образовать множество конструкций с разными наречиями и предлогами/постпозициями.



**Ключевые слова:** конструкция глагол-частица, фразовый глагол, глагольный компонент, неглагольный компонент, сравнительный анализ, английский, армянский, значение, фразеологический, наречие, предлог, постпозиция.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.08.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 01.09.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: